



Է. ԿԻՐԱԿԻ ԽԱՉԷՆ ԵՏՔ



ԺԱՄԱՄՈՒՏ

Պատուական եւ ամենայաղթ խաչիդ ամջել խոնարհած՝ երկրպագութիւն կ'ընենք քեզի, Տէր եւ մեր յանցանքներուն թողութիւնը կը խնդրենք, որովհետեւ անով դուն ջնջեցիր մարդկային ցեղի դատապարտութիւնը:

Եւ հիմա, շնորհիւ աստուածային սուրբ Նշանիդ՝ երկնային խաղաղութիւնդ շնորհէ ամբողջ աշխարհին:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԳՉ

Քրիստոս Թագաւորը օրհնութեան երգով բարեբանեցէք, արար աշխարհ:

Երկինքը եւ երկիրը ստեղծողին երգով գոհաբանութիւն մատուցանենք, արար աշխարհ:

Երրորդութեան ու մէկ աստուածութեան պատիւ եւ երկրպագութիւն մատուցանենք յաւիտեան, արար աշխարհ:

ՄԵՍԵՂԻ (Սղմ. 4, 7բ, 1)

Քու տեսքիդ լոյսը մեր վրայ շողաց եւ մեր սիրտը ողողուեցաւ ուրախութեամբ: Երբ քեզի դիմեցի արդարութեան համար, լսեցիր զիս, Աստուած իմ: Դուն, որ նեղութեանս ատեն սրտի հանդարտութիւն շնորհեցիր ինծի, ողորմէ՛ ինծի եւ աղօթքս լսէ՛:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

**Պօղոս Առաքեալին Կորնթացիներուն ուղղած Առաջին Թուղթն Է այս ընթերցուածը.
(1 Կոր. 1, 18-24)**

Խաչի լեզուն յիմարութիւն Է անոնց համար, որոնք կը կորսուին. բայց անոնց համար, որոնք կը փրկուին՝ ան Աստուծոյ զօրութիւնն Է: Որովհետեւ գրուած Է. Պիտի կործանեմ իմաստուններու իմաստութիւնը, պիտի մերժեմ խելացիներուն խորհուրդները: Ո՞ր է իմաստունը. ո՞ր է բանգետը: Ո՞ր է աշխարհի սովեստը: Աստուած յիմարեցուց աշխարհի իմաստութիւնը: Քանի որ աշխարհը իմաստութեամբ չճանչցաւ Աստուած, Աստուծոյ իմաստութեան մէջ, ասոր համար Աստուած հաճեցաւ քարոզութեան յիմարութեամբ փրկել հաւատացեալները: Իսկ որովհետեւ հրեաները նշան կը խնդրեն եւ հեթանոսները իմաստութիւն կը փնտռեն, մենք կը քարոզենք խաչուած Քրիստոսը, հրեաներուն համար՝ գայթակղութիւն, իսկ հեթանոսներուն՝ յիմարութիւն: Իսկ անոնց, որոնք կանչուած են, հրեայ թէ հեթանոս, անոնց կը քարոզենք Քրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն:



Ալէլուիա, Ալէլուիա,

Ինծի, քու ծառայիդ զօրութիւն տուր, քու աղախինիդ գաւակը փրկէ՛ եւ բարեհաճութեան նշան մը ցոյց տուր ինծի հանդէպ:

(Սաղմոս 85, 15)

Ալէլուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ

ՅԻՍՈՒՄԻ ԳԱԼՈՒՍԸ

(Մատթ. 24, 27-36)

«Ինչպես փայլակը կը մեկնի Արեւելքէն եւ կը շողայ մինչեւ Արեւմուտք, այնպէս պիտի ըլլայ գալուստը Մարդու Որդիին: Ուր գէշն է, հոն կը հաւաքուին արծուիկները: Այն օրերու անձկութիւններէն ետք, արեւը պիտի խաւարի, լուսինը պիտի տժգունի, երկինքէն աստղերը պիտի թօթափին եւ զօրութիւնները պիտի խախտին: Այն ատեն երկինքի վրայ պիտի յայտնուի Մարդու



Որդիին նշանը: Այն ատեն երկրի ազգերը իրենց կուրծքը պիտի բախեն եւ պիտի տեսնեն Մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերու վրայ իր ամբողջ զօրութեամբ եւ փառքով: Պիտի դրկէ իր հրեշտակները մեծ փողերով՝ հաւաքելու համար ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թզենիէն սորվեցէք առակը: Երբ անոր ոստերը թարմանան եւ տերեւները ցցուին, գիտէք որ ամառը մօտ է: Նմանապէս դուք, երբ տեսնէք այն բոլոր նշանները, գիտցէ՛ք որ Մարդու Որդին մօտեցած է, ձեր դռներուն առջեւն է: Ճը՞՞

մարիտ կ'ըսեմ ձեզի, այս սերունդը պիտի չանցնի մինչեւ որ այս ամէնը չկատարուի: Երկինքն ու երկիրը պիտի անցնին, բայց իմ խօսքերս պիտի չանցնին»:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ԼՐՈՒՄԸ

Քրիստոնեաներս ինչո՞ւ շուարած ենք եւ երկչոտ: Մարդը ստեղծուած է հանդիպելու զինք սիրող անձի մը, փրկող ու ոգեւորող: Խուսափինք ձգձգումէ ու անտարբերութենէ, պատրաստուելու համար այս հանդիպումին: Կարող չենք գիտնալ անոր ժամը ու պարագան. Քրիստոս պիտի վերադառնայ չսպասուած ժամու մը: Ի՞նչու մտահոգ ենք մենք, հաւատացեալներս, ստոյգ ըլլալով հանդերձ, թէ Ան երկայ է մեր Էութեան մէջ, «Երկինքն ու երկիրը պիտի անցնին, բայց իմ խօսքերս պիտի չանցնին»: Մեր կեանքին հաւատքի արեւը կրնայ խաւարիլ,

գործի եւ վկայութեան լուսինին լոյսը շիջանիլ: Ամէն ժամուն ենթարկուած ենք Սկրտութեան խոստումներուն խախտումին ու քրիստոնեայ յանձնառումին՝ քայքայումին: Իւրաքանչիւր երկվայրկեանին կը խնդրուի մեզմէ անցնիլ մահէն դէպի կեանք, եսասիրութենէն՝ անձայրածիր սիրոյն ապրումին: Այս անցքը ու նոր ծնունդը հեզասահ պիտի չիրականանան, այլ՝ զոհողութեամբ ու անխոնջ աշխատանքով: Անոք տեղի պիտի ունենան հին մարդուն մահով ու յարութեամբը անձին եսասիրութեան ու հպարտութեան գերեզմաններէն:

Յիսուսի վերադարձը պիտի իրականանայ օր մը: Իմաստութիւնն ու խոհեմութիւնը կը պահանջեն մեզմէ, որ հրսկենք ու աղօթենք իմաստուն կոյսերուն նման, որոնք իրենց լապտերները վառած էին, երբ փեւան հասաւ: Չմոռնանք, թէ Ասոր գալուստը պիտի պատահի ապագային, սակայն Ան արդէն սկսաւ Աւագ Ուրբաթ օրը, երբ «խաւարը տիրեց ամբողջ երկրի վրայ», եւ «Տաճարին վարագոյրը վերէն մինչեւ վար երկուքի պատռուեցաւ...: Երկիրը երերաց, ժայռերը ճեղքուեցան եւ գերեզմանները բացուեցան» (Մտթ. 27, 45 եւ 51-52), եւ «երբ կը սկսեր շաբթուան առաջին օրը, Մարիամ Մագդաղենացի եւ միւս Մարիամը եկան: Եւ ահա երկրաշարժ մը տեղի ունեցաւ: Աստուծոյ հրեշտակը իջաւ երկինքէն, քարը գլորեց եւ վրան նստաւ» (Մտթ. 28, 1-2): Բարին յաղթեց չարին, կեանքը՝ մահուան մեռելներէն Յարուցեալին զօրութեամբ: Ասոր հետ սկսաւ մարդկութեան վերածնունդը, վերագը տնելով մեղքով աղաւաղուած Աստուծոյ պատկերը: Ինչպէս որ մօր ուրախութիւնը կատարեալ է անցնելով երկունքէն, նոյնպէս Նոր Մարդուն ծնունդը կ'իրականանայ Գողգոթայի ճամբուն ու խաչին վրայ, արմատախիլ ընելով չարը ու գլորելով անոր վրայէն ժամանակի, նիւթի ու մահուան քարը, վայելելու համար փառաւոր Յարութիւնը:



Յովհաննէս Պօղոս Բ. Սրբ. Բահանայապետը կը կրկնէր Յիսուսի խօսքը. «Մի՛ վախնաք» եւ առէ՛ք լուծս ձեր վրայ, սորվեցէ՛ք ինձմէ որ սրտով հեզ եմ եւ խոնարհ ու պիտի գտնէք հանգիստը ձեր հոգիներուն: Լուծս քաղոք է ու բռնս՝ թեթեւ» (Մտթ. 11, 29): «Մի՛ վախնաք», որովհետեւ աշխարհը կը յառաջանայ դէպի միութիւն ու մարդկութիւնը՝ խաղաղութիւն: Հակառակ պատերազմներուն ու ահաբեկիչներուն ըմբոստութեան, «Մարդու Որդին պիտի դրկէ իր հրեշտակները մեծ փո-

ղերով՝ հաւաքելու համար ընտրեալները աշխարհի չորս կողմերէն» ուրախանալու համար եղբայրսիրութեամբ, վերջնական յաղթանակով ու կատարեալ արդարութեամբ, որովհետեւ «Տէրը պիտի գայ. ինք ի լոյս պիտի բերէ խաւարի գաղտնիքները եւ պիտի յայտնէ սրտերուն խորհուրդները: Այն ատեն իւրաքանչիւրը իր գովասանքը պիտի ընդունի Աստուծմէ» (Ա. Կոր. 4, 5): «Մի՛ վախնաք», որովհետեւ պիտի տեսնենք գալուստը Քրիստոսի ու յաղթանակը Ասոր, զոր սիրեցինք, ձեռքը բռնած իր խաչը որպէս մական ու շուրջը հրեշտակներու փաղանգը ու ընտրեալները, զորս հետը պիտի մտցնէ Ս. Երրորդութեան սիրտը: Չենք վախնար անորոշ ժամէն ու օրէն, որովհետեւ այսօր կ'ապրինք մեր յաւիտենականութիւնը Յարուցեալին կրկնելով. «Տէրը կու գայ» (Ա. Կոր. 16, 22): Եկուր ու բնակէ մեր մէջ: Արդ ուր Յիսուս կը գտնուի, հոն՝ երկինքը: